«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի №2 հիմնական դպրոց

Առարկա՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Ապրեսյան Լիլիթ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3-4

ԳԼՈՒԽ 1. Ընթերցանության դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում----------5-8

1.1.Ընթերցանության կարևորությունը կրտսեր դպրոցականների կյանքում----------5-6

1.2.Ընթերցանության արդի խնդիրներն ու նպատակները---------- 6-8

ԳԼՈՒԽ 2. Կրտսեր դպրոցականների ընթերցանության կարողականությունների և հմտությունների զարգացումը----------9-13

2.1. Ընթերցանության կարողունակության ձևավորում----------9-11

2.2. Ընթերցանության տեխնիկան----------11-12

2.3. Երեխայի մոտ ընթերցանության հմտությունների զարգացումը----------12-13

ԳԼՈՒԽ 3. Կրտսեր դպրոցականների ընթերցանության մակարդակի բացահայտում /հետազոտական մաս/---------- 14-15

ԳԼՈՒԽ 4. Ընթերցանության մեթոդիկան որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում---------- 16-20

4.1.Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերի կիրառմամբ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորումը---------- 16-19

4.2. Ընթեցանության կազմակերպման իրականացման ուղիները դիդակտիկ խաղերի միջոցով---------- 19-20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց նվազել և շարունակում է նվազել երեխաների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ: Ուսուցչի՝ մասնավորապես տարրական դասարանների ուսուցչի առջև մեծ խնդիր է դրվում երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ: Տարրական դասարաններում ընթերցանությունը հիմք է համարվում հետագայում գրականության նկատմամբ հետաքրքրությունների զարգացման, բառապաշարի հարստացման, լայն աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման համար:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Դպրոցի առջև ծառացած կարևոր խնդիրներից է աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որի հիմքերը դրվում են տարրական դասարաններում: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն անհնար է պատկերացնել առանց ընթերցանության, քանի որ ընթերցանությունը մտածողության և մտավոր զարգացման ակունքներից մեկն է:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այսօր ընթեցանության նկատմամբ հետաքրքրության նվազմամբ, տարրական դպրոցի մայրենիի դասերի առջև դրված զարգացնող խնդիրներով, բազմամշակույթ, գրագետ, բարձր ընթերցողական կարողունակությամբ, կրթվող անձ դաստիարակելու կենսական պահանջով և ընթերցանության կարողունակության ձևավորման համար առկա մեթոդների կիրառման արդյունավետությամբ:

Առաջադրվող հարցեր՝

1. *Ի՞նչ բաղադրիչներ են անհրաժեշտ երեխաների մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության առաջացման համար:*
2. *Ի՞նչ մեթոդներ ու միջոցներ են կիրառվում կրտսեր դպրոցականների կարդալու կարողունակության զարգացման ուղղությամբ:*

Այս և նմանատիպ մի շարք հարցերի պատասխանները ներկայացված են հետազոտական աշխատանքում:

Հետազոտության օբյեկտը կրտսեր դպրոցականների ընթերցանության կարողունակության ուսումնասիրումն է ուսուցման գործընթացում:

Հետազոտության առարկան կրտսեր դպրոցականների ընթերցանության մակարդակի բացահայտումն է, նրա կրթական, դաստիարակչական և զարգացնող հնարավորությունների գիտատեսական սահմանումը:

Ուսումնասիրությունների ընթաքում կիրառել ենք հետևյալ **մեթոդները՝**

- ✓ հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրում,
- ✓ դասերի լսում և արդյունքների վերլուծություն,
- ✓ հարցախույզի իրականացում ուսուցիչների և աշակերտների շրջանում,
- ✓ արդյունքների քանակական և որակական վերլուծություն,
- ✓ մեր կողմից մշակված մեթոդական ցուցումների հիման վրա դասերի վարում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- ➢ ուսումնասիրել կրտսեր դպրոցականների կարդալու կարողունակություններն ու հմտությունները,
- ➢ հետազոտել կրտսեր դպրոցականների իմացական պատրաստվածության մակարդակը,
- ➢ ներկայացնել ընթերցանության արդի նպատակներն ու խնդիրները,
- ➢ զարգացնել խմբով աշխատելու կարողունակությունը՝ գնահատելով ընկերոջ կատարած գործունեությունը,
- ➢ զարգացնել աշակերտների տեսողական, լսողական ուշադրությունը, հիշողությունը՝ տրված դիդակտիկական խաղերի, առաջադրանքների միջոցով:

Հետազոտության խնդիրներն են՝

- ➢ ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, տարրական դպրոցի չափորոշիչներ, ծրագրեր:
- ➢ ուսումնասիրել, թե որքանով է ընթերցանությունը զարգացնում կապակցված խոսք կառուցելու ունակությունը:
- ➢ մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականների կարդալու կարողունակության ձևավորմանը նպաստող վարժությունների համակարգ և ներկայացնել մեթոդական երաշխավորումներ:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1.Ընթերցանության կարևորությունը կրտսեր դպրոցականների կյանքում

Կրթված հասարակությունը ցանկացած երկրի զարգացման երաշխիքն է, հզոր պետություն ունենալու գրավականը: Իսկ մեր երկիրն այսօր կարիք ունի և՛ զարգացման և՛ հզորացման: Ինչպես նշում է անգլիական վերածննդի ականավոր դրամատուրգ, քաղաքագետ և պոետ Ջոզեֆ Ադիսոնը. «Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի»[1]: Իսկ ահա հանճարեղ Չարենցը գրքերի աշխարհը անեզր տիեզերքի է նմանեցնում՝ ձոնելով գրքերի հատուկ տաղ: Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, որ բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը: Անգամ գիտնականներն են ապացուցել ընթերցանության կարևորությունը մարդու կյանքում: Այն ոչ միայն օգնում է, որպեսզի դառնանք խելացի, այլ նաև կարող է, ըստ էության, բարելավել մեր ուղեղի աշխատանքը:

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է՝ զարգացնել կարդալու, պատմելու կարողունակությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Ուսուցման ընթերցման հաջողությունը մեծապես կախված է երեխայի գործունեության շարժառիթներից: Անշուշտ, ծնողները ցանկանում են, որ իրենց որդին կամ դուստրը սովորեր կարդալ մեկ շաբաթվա ընթացքում, բայց մենք չեք կարող ստիպել երեխային երկար ժամանակ նստել գրքի ետևում, բարկանալ, եթե ինչ-որ բան սխալ է կարդացել: Ցանկալի է, որ երեխան կարճ ժամանակում բարձր ձայնով կարդա: Ապացուցված է, որ կարևոր է ոչ թե ընթերցման տևողությունը, այլ վարժությունների հաճախականությունը: Մայրենիի ուսուցման մեթոդիկայում ներկայացված են այն մանկավարժական հիմնական պայմանները, որոնք անհրաժեշտ է ապահովել սովորողի խոսքային գործունեության ժամանակ:

Դրանք հետևյալներն են.

[1] https://www.panorama.am/am/news/2015/02/19/book-present-day/110214

- Խոսելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն՝ այսինքն՝ խոսելու պահանջմունք:/Մարդը խոսում է, երբ խոսելու կարիք ունի. երբ աշակերտը խոսում է, պատմում, կարիք չկա նրան սաստել կամ ընդհատել/:
- Խոսելու նյութի առկայություն. խոսքը կառուցելուց առաջ, պետք է սովորողն ունենա տեղեկություններ նյութի մասին: /Նկատի ունենալ, թե որքանով է հետաքրքիր և ուշագրավ, իսկ փաստերը՝ արժեքավոր և հիմնավոր/:
- Խոսքի ընդունված կանոններով աշակերտներին զինելը, երեխաներին տալ խոսքի օրինակելի նմուշներ: /Խոսքի օրինակելի նմուշները երեխաները ստանում են ընտանիքում, դպրոցում, գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են, ունկնդրում/:
- Հասկանալ այն ամենը, ինչի մասին խոսվում է, ընկալել խոսքի տրամաբանությունը:/ Առանց խոսելու նյութի հասկացման, հնարավոր չէ բովանդակային խոսք կառուցել/:
- Տարբերել գործող անձերի տրամադրությունը և այն ներկայացնել ինչպես ձայնային, այնպես էլ լեզվական արտահայտչամիջոցներով:
- Ապահովել կապը ունկնդրի հետ./խոսելիս հետևել արդյոք մարդիկ քեզ լսու՞մ են, հասկանու՞մ, հետաքրքիր՞ր է, չե՞ն ձանձրանում, ընտրել համապատասխան բառապաշար, խոսել պարզ լեզվով/ :

Փորձը ցույց է տալիս, որ սովորողների բանավոր խոսքն արտացոլում է նրանց ներաշխարհը, մտքերը, անհանգստությունները, հոգեբանությունը: Սա մենք համարում ենք չափազանց կարևոր և մայրենիի դասերի ընթացքում փորձում ենք ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, այնպիսի հուզական մթնոլորտ, որոնք կնպաստեն ազատ, անկաշկանդ հարաբերությունների, խոսելու, պատմելու, արտահայտվելու սովորողների պահանջմունքների դրսևորմանը:

1.2. Ընթերցանության արդի խնդիրներն ու նպատակները

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք[2]: Հիմք ընդունելով կրթության մասին օրենքը՝ Հայաստանի Հանրապետությունը ստեղծել է բոլոր անհրաժեշտ նախադրյալները

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

նախադպրոցական, դպրոցական և բուհական կրթություն ստանալու համար: Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողունակությունների լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատասիրության նախնական հմտությունների ձևավորումն է: Արդի տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց՝ նվազել է երեխաների՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն պետք է ձևավորել դեռևս գրաճանաչության շրջանում, որի հիմնական նպատակը երեխաների՝ կարդալու և գրելու կարողունակությունների ձևավորումն է ու զարգացումը: Դրան հասնելու համար դասագրքում կիրառվում են մի շարք միջոցներ[3]: Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Նրա մեջ են ամփոփված ու նրա միջոցով են իրականացվում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական, տարրական գիտելիքների պահանջները[4]: Կարդալու ողջ գործընթացը, ինչպես ցանկացած մտավոր գործունեություն, սերտորեն առնչվում է մտածողությանը:



Երեխայի մոտ ընթերցանության հանդեպ սեր և հետաքրքրություն ձևավորելու համար ընթերցանությունը պետք է ներկայացնել որպես ազատ ժամանցի կազմակերպման ձև, ոչ թե դպրոցական հանձնարարություն: Սկսնակ ընթերցողի համար դժվար է որևէ հեքիաթ ամբողջությամբ կարդալը: Նրանց մեծ մասը, երբ կարդալիս հանդիպում է դժվարության, կորցնում է հետաքրքրությունը գրքի

[3] Գյուլամիրյան Ջ., Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2018, Զանգակ, 314 էջ:

[4] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Ե., 1978, Լույս, 245 էջ:

նկատմամբ և հրաժարվում ավարտին հասցնել այն: Ընթերցելիս պետք է հետևել, որ երեխան կարդա վանկերով, օրինակ, ոչ թե կ-ա-տ-ու, այլ՝ կա-տու: Այսինքն՝ կարդալու նվազագույն միավորը պետք է լինի վանկը: Երեխայի համար բարդ է հիշել մի քանի տառերի հաջորդականությունը, հատկապես բազմաթիվ տառեր պարունակող բառերը տառ առ տառ դժվար է վերարտադրել, իսկ 2-3 վանկն ավելի հեշտ է հիշել և կապել իրար: Սկսնակ ընթերցողը սկզբնական շրջանում, երբ դեռ լիարժեք չի տիրապետում կարդալու տեխնիկային, հնարավոր է՝ առաջին ընթերցելուց միտքը չհասկանա: Նորից կարդացեք արդեն իսկ ծանոթ տեքստը ու ուշադիր հետևեք մտքին: Կարդացեք բարձրաձայն, որպեսզի բացի աչքերով տեքստը տեսնելուց նաև լսի: Ընթերցանությունը խթանելու համար երեխայի հետ կարելի է մնջախաղ կազմակերպել: Օրինակ՝ թղթի վրա մի քանի բառ գրեք՝ առավելագույնը 5-6 բառ: Երեխային հանձնարարեք բառը մտքում կարդալ և մնջախաղի ձևով բացատրել, իսկ դուք փորձեք գուշակել բառը: Երեխան, ակամայից տարվելով խաղով, չի նկատում՝ ինչպես կարդաց բառերը: Եթե կարողանում է կարդալ բառերը, գրեք երկու բառից կազմված նախադասություններ: Եթե խաղը հետաքրքիր է երեխայի համար, բարդացրեք հանձնարարությունները, ավելի երկար բառեր կամ նախադասություններ գրեք: Երեխաների առջև դրեք փոքր ու հեշտ հաղթահարելի խնդիրներ, որպեսզի չհիասթափվեն[5]:

Ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունը բարձրացնելու հրաշալի միջոց է հանելուկը՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Հանելուկը նպաստում է երեխայի խորհելու, դատելու, կռահելու ունակությունների զարգացմանը, ամրացնում է հիշողությունը, նպաստում ինքնավստահության ձեռքբերմանը, օգնում է բնության երևույթների, շրջապատող իրերի և առարկաների, կենդանական, բուսական աշխարհի մասին ունեցած գիտելիքների շրջանակի ընդլայմանը, վերացական մտածողության զարգացմանը: Հանելուկի պատասխանը գտնելու համար պահանջվում է որոշակի սրամտություն, որն էլ մարդու լավ ու արագ մտածելու համար հիմք է հանդիսանում:

[5] https://blog.armparents.com/(02.15.2020թ.)

ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

2.1. Ընթերցանության կարողունակության ձևավորում

Մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկը լավ ընթերցողներ պատրաստելն է: Իսկ ի՞նչ է նշանակում «լավ ընթերցող». մի՞թե երեխաները, ճանաչելով հայերեն այբուբենի բոլոր տառերը և դրանք վարժ միավորելով բառերի ու նախադասությունների մեջ, արդեն լավ ընթերցող չեն: Գրաճանաչ լինել՝ դեռ չի նշանակում ակտիվ ընթերցել կարողանալ: Կարդալու կարողունակության ձևավորման առաջին աստիճանի հաղթահարումից հետո անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ ծավալել սկսնակ ընթերցողների մեջ կարդալու որակական հատկանիշների ձևավորման ուղղությամբ: Այդ աշխատանքների հիմնական նպատակը սովորողների մեջ կարճ ժամանակում հնարավորինս շատ և հիմնարար տեղեկության ձեռքբերման կարողության ձևավորումն ու զարգացումն է, քանի որ Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. «Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական ու պատասխանատու բաժինն է: Թե՛ լեզվի մյուս բաժինների և թե՛ միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահովվում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքներին, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում»[6]: Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է

[6] Ղարիբյան Ա. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954, էջ 256:

կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում, հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա: Կարդալու կարողության ձևավորումը կրտսեր դպրոցի մայրենիի դասերի հիմնական նպատակն է եղել և մնում է որպես այդպիսին: Կարդալու գործողությունը հոգեկան մի բարդ երևույթ է, որի վերլուծությունը ուսուցչին ոչ միայն կօգնի հնարավորինս ճիշտ ըմբռնելու այդ գործընթացի առանձին կողմերն ու դրանց ուսուցման դժվարությունները, այլև կնպաստի այդ գործընթացի մեթոդապես ճիշտ կառուցմանն ու արդյունավետ իրականացմանը: Կարդալու հմտությունը խիստ գործնական կարողություն է, սակայն ինքնազարգացման, անձի դաստիարակության, երեխաների ընդհանուր զարգացման, հոգեկան և մտավոր աշխարհի հարստացման ամենաարդյունավետ միջոցը, որը խորացնում է մտածողությունը, միտքը մղում է որոնումների և երևույթների վերլուծության:

«Առանց կարդալ իմանալու առանձին անհատը կարող է յուր շրջապատող կյանքի մեջ որևէ նշանավոր տեղ բռնել: Ուստի և ուր որ գրավոր խոսքը գործադրություն և հարգանք, իսկ դպրոցը համակրողներ է ունեցել, այնտեղ ընթերցանության հոգատարությունը եղել է դպրոցի ծանրակշիռ խնդիրներից մեկը»[7]: Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պետք է կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունք:

Եվ այսպես՝ տարրական դպրոցի սովորողը պետք է կարողանա՝

- լսել, հասկանալ իրեն ուղղված խոսքը,
- հասկանալով և արտահայտիչ ընթերցել արձակ և չափածո գրական տեքստեր,
- տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրել լսածը, կարդացածը,
- արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը,
- արտահայտիչ արտասանել բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ՝ շեշտադրելով հիմնական գաղափարը,

[7] Աղայան Ղ. Երկեր,հատոր 4, Եր. 1950: [էջ 301]

- ձևակերպել հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ[8]:

2.2. Ընթերցանության տեխնիկա

Տարրական դպրոցի հիմնական խնդիրն է զարգացնել տեքստերը արագ, ճշգրիտ և բովանդակալից կարդալու կարողունակությունը: Սա անհրաժեշտ է բոլոր առարկաների հաջող յուրացման համար:

Ընթերցանության տեխնիկան ներառում է մի քանի տարրեր, մասնավորապես.

- ընթերցանության ըմբռնում (երեխայի կողմից կարդացածի ըմբռնումը),
- ընթերցանության արագություն (բնորոշվում է որոշակի ժամանակահատվածում կարդացված բառերի քանակով),
- ընթերցանության ձևը (երեխան կարդում է վանկերով, միայն դժվար բառերը վանկերով կամ ամբողջ տեքստը ամբողջական բառերով),
- ընթերցանության արտահայտչականություն (դրսևորվում է դադարների կիրառմամբ, ճիշտ ինտոնացիա գտնելով, սթրեսի ճիշտ տեղաբաշխմամբ),
- ճիշտ ընթերցում (արտահայտվում է նրանով, որ աշակերտը խուսափում է, կամ հակառակը՝ սխալվում է):

Կրթական նոր չափանիշներին համապատասխան՝ ընթերցանության տեմպերը չեն հանդիսանում ընթերցանության հմտությունները գնահատելու հիմնական չափանիշը: Ընթերցանության արագությունը ընթերցանության տեխնիկայի առանձին բաղադրիչ է: Հարցերից մեկը, որ հետաքրքրում է ծնողներին, հետևյալն է՝ **ինչո՞ւ ստուգել երեխաների ընթերցանության տեխնիկան**: Տարրական դասարաններում ընթերցանության տեխնիկան պետք է ստուգվի տարին ավելի քան երկու անգամ: Դա պետք է արվի, որպեսզի վերահսկվի ընթերցանության հմտությունների ձևավորման դինամիկան. սա է ընթերցանության տեխնիկայի ստուգման նպատակը:

Ինչպե՞ս ընտրել տեքստ՝ ընթերցանության հմտությունները ստուգելու համար:

Ընթերցանության տեխնիկան ստուգելու համար ընտրվում են հատուկ տեքստեր՝ ըստ մեթոդիստների առաջարկությունների: Տեքստը պետք է լինի երեխայի համար անծանոթ, բայց հասկանալի: Նախադասությունները պետք է լինեն կարճ, առանց որևէ բարդ կառուցվածքի կամ նշանների:

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Ավելի լավ է ընթերցանության ստուգման տեքստը լինի առանց նկարազարդումների և երկխոսությունների, որպեսզի երեխաները չշեղվեն կարդալիս, իսկ տեքստը տեղադրվի մեկ էջում:

Նախքան թեստը սկսելը, երեխային պետք է հանգիստ ընթերցանություն կազմակերպել, որպեսզի նա չանհանգստանա: Տեքստը կարդալիս չենք կարող ընդհատել երեխային, ուղղել սխալները: Ընթերցանությունն ավարտելուց հետո նոր կարող ենք վերադառնալ այն բառերին, որոնք դժվարություն են առաջացրել կամ սխալ են կարդացվել և խնդրենք երեխային նորից կարդալ դրանք:

Եթե առաջադրանքները երեխայի կողմից սխալ է կատարվել, ապա նրա հետ բարձրաձայն կարդում ենք տեքստը՝ բացահայտելու բովանդակության թյուրիմացության պատճառները: Օրինակ՝

- տեքստում անծանոթ բառերի առկայություն,
- անուշադիր ընթերցանություն և բովանդակության վատ անգիր,
- ընթերցանության հմտությունների անբավարար ձևավորում, ինչը հանգեցնում է սխալների և տեքստի ընկալման աղավաղման:

Կախված բացահայտված պատճառներից՝ անհրաժեշտ է կազմակերպել աշխատանք՝ աշակերտի բառապաշարը հարստացնելու կամ սահուն ուշադիր բարձրաձայն կարդալու հմտությունը հետագայում զարգացնելու համար:

Հաշվի առնելով դպրոցականների կարդալու սովորելու տարբեր մակարդակները, ինտելեկտը և այլ մտածողության գործընթացները՝ յուրաքանչյուր աշակերտի կարելի է անհատապես առաջարկել նրա համար առավել մատչելի առաջադրանքներ: Այսպիսով, հնարավոր կլինի ստեղծել ուսման մեջ հաջողության իրավիճակ՝ օգտագործելով աշակերտակենտրոն մոտեցում, որն ընկած է աշակերտների հոգեբանական հարմարավետության հիմքում:

2.3.Երեխայի մոտ ընթերցանության հմտությունների զարգացումը

Ընթերցանության հմտությունները կարող ենք զարգացնել հատուկ խաղերի օգնությամբ: Ահա դրանցից մի քանիսը.

Բզզոց ընթերցում- Ամենօրյա ընթերցանություն դասարանում, երբ բոլոր աշակերտները 5 րոպե կարդում են ենթատոնով:

- *Տեքստի կրկնվող ընթերցում:* Այս վարժության էությունը հետևյալն է. աշակերտները կարդում են տեքստը միաժամանակ, բայց յուրաքանչյուրն իր տեմպերով: Մի րոպե անց ուսուցիչը կանգնեցնում է երեխաներին, և նրանք նշում են այն բառը, որի համար կարդացել են: Այնուհետև ուսուցիչը երեխաներին խնդրում է կարդալ տեքստի ուղղագրությունը: Հետո նույն հատվածը վերընթերցում են և նորից նշում այն բառը, որը կարդացել են և համեմատում նախորդ արդյունքի հետ:
- *Վերներ և արմատներ:* - Երեխաները հրավիրվում են կարդալ բառերը՝ ծածկելով տառերի վերին կամ ստորին կեսը երկար անթափանց քանոնով:
- *Գրատախտակին շատ բառեր կան:*- Երեխաները պետք է գտնեն այն բառը, որը կկանչի ուսուցիչը:
- *Ինքնաչափ ընթերցում:* -Դասի վերջում մի քանի րոպե թողնում ենք ընթերցանությունը ինքնուրույն չափելու և արդյունքները գրանցում հատուկ օրագրում:

Տարրական դպրոցում ընթերցանության տեխնիկայի զարգացման աշխատանքները չափազանց կարևոր են: Ի վերջո, դա սահուն և բովանդակալից ընթերցանությունն է, որն ակտիվացնում է մտածողության, ուշադրության, հիշողության գործընթացները և հանդիսանում է հաջող ուսուցման գործընթացի գրավականը:

Համաձայն ընդհանուր ընդունված չափանիշների՝ տարրական դասարանների աշակերտների համար ընթերցանության նորմերը հետևյալն են.

ԴԱՍԱՐԱՆ	ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ	ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ
IV	75-80 բառ	95-100 բառ
III	60-70 բառ	75 բառ
II	45-50 բառ	60 բառ
I	20-25 բառ	30-40 բառ

ԳԼՈՒԽ 3. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ /ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ/

Հետազոտական աշխատանքի թեմայի շրջանակներում անցկացրեցինք հարցախույզ Չարենցավանի №2 հիմնական դպրոցի դասվարների շրջանում:

Հարցախույզի նպատակն էր պարզել մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականի՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը նպաստող միջոցներն ու առաջացած դժվարությունները, բացահայտել ընթերցանության կարողունակությունների և հմտությունների մակարդակները, ստուգել ընթերցանության տեխնիկան և այլն:

Դիտարկենք հարցման և հետազոտության արդյունքները.







Չափանիշը		Սակարդակը	Տոկոսը
Արագություն		Ա	24%
		Բ	16%
		Գ	60%
Սահունություն		Ա	26%
		Բ	14%
		Գ	60%
Ճշտգրտություն		Ա	20%
		Բ	18%
		Գ	62%
Ընկալում		Ա	25%
		Բ	15%
		Գ	60%
Արտահայտչա կանություն	Ա	ա	20%
		բ	8%
	Բ	ա	19%
		բ	-
	Գ	ա	53%
		բ	-

/Բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգում/

ԳԼՈՒԽ 4. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

4.1.Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերի կիրառմամբ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորումը

Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից է: Ընթերցանության միջոցով են իրականացվում աշակերտների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարահաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ու դաստիարակության ծրագրային պահանջները:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսումնառության առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու պահանջները.

1. աշակերտների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմանական հատկանիշներով,
2. գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնելով երեխաների բառապաշարը, զարգացնել աշակերտների լեզվական կարողությունները,
3. գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

«Տարրական դպրոցում բացատրական ընթերցանության դասերի նպատակն է՝ երեխաներին սովորեցնել կարդալ գեղարվեստական գրականություն, նախապատրաստել դրա հետագա պարբերաբար ուսումնասիրումը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն առաջացնել և դնել գրագետ ընթերցողի ձևավորման հիմքեր»[9]:

Տարրական դպրոցում մայրենիի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի ու միջոցների,

[9] Ջ. Հ. Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, «Լույս» հրատ., Երևան 1998, էջ 37:

զարգացնող տեխնոլոգիաների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է: Տարրական դպրոցում մայրենիի դասի նպատակներից են երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրության առաջացնելը և ընթերցողական կարողության ձևավորումը և զարգացումը: Եթե բավարար մակարդակով ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ իրականցվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց: Ուսուցման հիմնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը: Դա չի նշանակում, որ դասը պլանավորելիս, դասի նպատակները որոշելիս պիտի առաջնորդվել միայն կարդալու կարողության զարգացմանը միտված նպատակով: «Դասին նախապատրաստվելու տեխնոլոգիան ենթադրում է նպատակի հետ կապված չորս խնդրի լուծում: Որոշել դասի մանկավարժական նպատակը՝ ելնելով դասանյութի հնարավորությունից: Աշակերտի համար որոշել մի այնպիսի ուսումնական գործունեություն, որի դաստիարակչական արդյունքը ուսուցչի նպատակն է, այսինքն՝ ուսուցիչն իր նպատակին կարող է հասնել աշակերտի այդ գործունեության միջոցով: Աշակերտի համար էլ պետք է որոշել մի այնպիսի նպատակ, հանուն որի նա կամավոր է ընդգրկվելու ուսուցչի նախատեսած այդ գործունեության մեջ: Նպատակը որոշելուց հետո պետք է մտածել աշակերտի գիտակցության մեջ այն առաջացնելու մասին: Վերջին խնդրի լուծումն ուսուցիչը կարող է ապահովել արդեն ուսուցման մեթոդների միջոցով»[10]: Բացատրական ընթերցանության մեթոդը բազմաթիվ մեթոդների համալիր է, որի բաղադրամասերի ճիշտ իրականացման դեպքում լուծվում են նաև կարդալու գործընթացի հետ կապված աշակերտների բազմաբնույթ նպատակները: Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասն անարդյունավետ և

[10] Տե՛ս Մանուկյան Ս. Պ. , Մանկավարժական և աշակերտական դասանպատակները, Ե., Լուսաբաց,2003, էջ 151-152:

ձանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի իրականացման գործընթացի առանձնահատկությունները: Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայում մշտապես դիտարկվել է բացատրական ընթերցանության մեթոդի հինգ բաղադրամաս.



Սակայն, չի կարելի խախտել այս բաղադրամասերի հաջորդականությունը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը նախապատրաստում է մյուսին: «Աշակերտների իմացական Գործունեության բնույթը, նրանցից ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության մակարդակն արտացոլվում է ոչ թե մեթոդների դասակարգմամբ, այլ նրանց կատարելության աստիճանով» [11]:



[11] Տե՛ս Огородников И. Т., Педагогика, Просвещение, М., 1968, с. 235.

Հարցմանը մասնակից ուսուցիչների մեծամասնությունը նշել է, որ իր դասերի ընթացքում գերակշռում է բացատրական ընթերցանության բաղադրամասերից զրույցը: Մենք կարծում ենք, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն կառաջանա, եթե առաջին անգամ դասանյութի շուրջ աշխատեն աշակերտները: Իհարկե, ուսուցիչընախապես պետք է կազմի այնպիսի առաջադրանքներ և հարցեր, որոնք կօգնեն աշակերտներին հետաքրքրվել տրված նյութերով, և կփորձեն ինքնուրույն կարդալ դրանք:

4.2. Ընթեցանության կազմակերպման իրականացման ուղիները դիդակտիկ խաղերի միջոցով

<u>Խաղ 1: «Գտի՛ր ավելորդը»:</u> *Անհրաժեշտ պարագաներ՝* փուչիկներ, գունավոր նշիչներ:

Ընթացքը՝ փուչիկների վրա գրված տառերով կազմել բառ և գտնել ավելորդ տառը: Այս խաղը թարմացնում է երեխաներին, քանի որ, երբ գտնում են ավելորդ տառը, ծափահարում են և պայթեցնում փուչիկները:

<u>Խաղ 2: «Վանկախաղ»:</u> *Խաղի նպատակն է* ամրակայել երեխաների կարդալու կարողունակությունը, բեռնաթափել հոգնածությունը:

Անհրաժեշտ պարագաներ - շրջանաձև կտրտված ստվարաթղթի վրա կտրտված վանկեր՝ (րա, րու, րի և այլն) և (տա, տի, տու և այլն), իսկ շրջագծի ներքևում՝ բռնակ:

Խաղի ընթացքը: Ուսուցչուհին նախ ձախ ձեռքով բարձրացնում է բառի առաջին վանկը (տա), ապա աջ ձեռքով բարձրացնում է երկրորդ վանկը (տի): Երեխաները կարդում են դրանք առանձին-առանձին: Ապա վանկերը մոտեցնում են իրար: Երեխաները կարդում են ստացված բառը (տատի): Այդպես երեխաները կարդում են տատի, տարի, Արիս բառերը: Նույն աշխատանքը կարելի է կատարել ցանկացած հնչյուն-տառի շուրջ:

Հետաքրքիր խաղ է, քանի որ այսպես երեխաները վերհիշում են նաև անցած տառերը, յուրաքանչյուր կազմած բառ ենթարկում ենք հնչյունային վերլուծության, կազմում բառեր և կարդում:

Խաղ 3. «Ամբողջացրե՛ք նախադասությունները»: *Խաղի նպատակները՝* զարգացնել հասկանալով կարդալու աշակերտների կարողությունը, մշակել խմբով աշխատելու ունակություն, դաստիարակել համախմբվածություն, համերաշխություն, հանդուրժողականություն:

Անհրաժեշտ պարագաներ-կտրտած նախադասություններով լի ծրարներ (խմբերի թվերին համապատասխան):

Խաղի ընթացքը: ա/ 1-6 հաշվով դասարանը բաժանվում է 6 խմբի: Յուրաքանչյուր խումբ ստանում է ծրար, որի մեջ լցված է 2-3 (մասերի բաժանված) նախադասություն:

Բացատրություն- ուսուցիչ- բ/ յուրաքանչյուր խումբ ունի մեկ ծրար: Ծրարում գտնված մտքով իրար հետ կապված նախադասությունները կտրտած են, բաժանված են մասերի:

Հանձնարարական- ամբողջացրե՛ք նախադասությունները և դասավորե՛ք այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվի ամփոփ միտք:

գ/ երեխաները խմբով աշխատում են, ամբողջացնում նախադասությունները: դ. յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է խմբի կազմածը:

ե/ աշխատանքի գնահատում:

Այս խաղի միջոցով երեխաները ձեռք բերեցին համագործակցելու, իրենց միտքն արտահայտելու կարողություն, ձևավորվեց նաև ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն:

Խաղ 4. «Հավաքի՛ր պատմությունը»: *Խաղի նպատակները* ՝ձևավորել ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն, զարգացնել ուշադրությունը և հիշողությունը, զարգացնել բառակապակցություններ կազմելու ունակությունը:

Անհրաժեշտ պարագաներ- գունավոր թղթեր որոնց վրա գրված կլինի նկարի մոտավոր բովանդակությունը:

Խաղի ընթացքը- դասարանը բաժանել այնքան խմբի, որքան, որ նկարի պատմության մեջ առկա նախադասությունների քանակն է: Նկարի պատմության յուրաքանչյուր նախադասություն գրել տարբեր գույնի թղթերի վրա (նախադասություններն էլ իրենց հերթին առանձնացնում ենք բառերի): Յուրաքանչյուր խմբի տալիս ենք մի գույնով գրված բառեր, որոնցից խումբը պետք է հավաքի նախադասություն, ճիշտ հավաքելու դեպքում արդեն ամբողջական նախադասությունը փակցնում ենք պաստառին: Այսպես հավաքում ենք ամբողջ պատմությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօրվա կրթական պահանջներին համապատասխան՝ դպրոցը կանգնած է ուսուցման հումանիտար բովանդակությունը, մարդասիրական արժեքները և սովորողների քաղաքացիական գիտակցությունը ձևավորելու, հասարակության փոփոխվող պայմաններին աշակերտի հարմարվելու մեխանիզմները զարգացնելու ճանապարհին: Տարրական դասարաններում ընթերցանությունը հիմք է համարվում հետագայում գրականության նկատմամբ հետաքրքրությունների զարգացման, բառապաշարի հարստացման, լայն աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման համար:

Հաշվի առնելով գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, փորձնական դասերի վարումը, մեր կատարած հետազոտությունները՝ եկանք հետևյալ եզրահանգմանը.

- Ընթերցանության նպատակն է զարգացնել կարդալու, պատմելու կարողունակությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները:
- Ընթերցանության միջոցով են իրականացվում աշակերտների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարահաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ու դաստիարակության ծրագրային պահանջները:
- Պետք է ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, այնպիսի հուզական մթնոլորտ, որոնք կնպաստեն ազատ, անկաշկանդ հարաբերությունների, խոսելու, պատմելու, արտահայտվելու սովորողների պահանջմունքների դրսևորմանը:
- Տարրական դպրոցում մայրենիի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի ու միջոցների, զարգացնող տեխնոլոգիաների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է:
- Նույն բնագրի շուրջ տարաբնույթ աշխատանքներ կատարելով՝ աշակերտը ձեռք է բերում լավ և հասկանալով կարդալու կարողունակություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Լ. Մ., Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման կարևոր գործոն, «Զանգակ», Երևան 2015:
2. Բալայան Լ., Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց, «Նախաշավիղ» 3-4. 2009:
3. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գրական ունկնդրում և խոսք, 1-ին դասարան (ինտերակտիվ ձեռնարկ),Ե., Զանգակ, 2013, 84 էջ:
4. Գյուլամիրյան Ջ. Հ., Խոսքի զարգացում, «Զանգակ» հրատ., Երևան 2013, էջ 44-45:
5. Գյուլամիրյա Ջ. Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրականդասարաններում, «Լույս» հրատ., Երևան 1998:
6. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Երևան 2018, էջ 315:
7. Թադևոսյան Թ., Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց, «Նախաշավիղ» 6. 2015, 64 էջ:
8. Թորոսյան Կ., Չիբուխչյա Կ. ն, Բալայան Ա. «Ինչպես պլանավորել մայրենիի դասը:3–րդ դասարան», «Զանգակ» հրատ., Երևան 2017, էջ 512:
9. Չիբուխչյան Կ. Ռ., Ընթերցողական գործունեության ձևավորման տեխնոլոգիան տարրական դասարաններում, «Նախաշավիղ» 7. 2012, 64 էջ:
10. Պատվական Խաչատրյան, Հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա Երևան 2004թ.182 էջ
11. Քյուրքչյան, Տեր-Գրիգորյան, Մայրենի մեթոդական ձեռնարկ, Երևան 2007թ.
12. Огородников И. Т., Педагогика, Просвещение, М., 1968, с 235.
13. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
14. https://blog.armparents.com/(02.15.2020թ.)
15. https://divnoje.ru/
16. https://forum.armedu.am/(02.15.2020թ.)
17. https://yatm89.ru/